Հաստատված է
ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ
ՄԵԹՈԴԻԿԱՆԵՐԻ ԱՄԲԻՈՆԻ
թիվ 6 նիստում
"08" դեկտեմբերի, 2021թ.

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱՆԵՐԻ ԱՄԲԻՈՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2021

1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարում ամբիոնի ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը, կատարված ուսումնական աշխատանքի ծավալը:
Հաշվետու տարում ամբիոնի ուսումնական աշխատանքների ծանրաբեռնվածությունն ըստ ուսումնական պլանի համապատասխանում է կատարված ուսումնական աշխատանքի ծավալին: Ամբիոնի դասախոսները կատարել և կատարում են ծանրաբեռնվածությամբ նախատեսված դասաժամերը: Համավարակով պայմանավորված ուսումնական գործընթացը կազմակերպվել է հիբրիդային տարբերակով՝ ըստ կուրսերի դասացուցակներում նշված օրերի՝ առցանց և առերես, այս գործընթացում դասախոսները գրեթե չեն ունեցել խնդիրներ, դասաժամերը հստակ իրականացրել են ըստ դասացուցակի, որևէ փոփոխության դեպքում տեղեկացրել են ամբիոնի մասնագետին, ով լրացումներ և նշումներ է կատարել էլեկտրոնային դասացուցակներում: Կատարվել են առարկայաուսումնամեթոդական փաթեթների վերանայումներ և լրամշակումներ, առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումներն ըստ ձևաչափերի ներկայացվել և տեղադրվել են բոլոր կուրսերի էլեկտրոնային հարթակներում: Քննարկվել և հաստատվել են 2021-2022 ուսումնական տարվա աշխատանքային պլանը, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի վերնագրերը: Ուսումնական ծանրաբեռնվածությամբ և ըստ դասացուցակի դասախոսներն իրականացրել են իրենց 1-ին կիսամյակի դասաժամերը: Համալսարանի գիտական խորհրդում քննարկվել և հաստատվել են ամբիոնի գծով երկու հայցորդի ատենախոսությունների թեմաների վերնագրերը, մինչև տարեվերջ ամբիոնում կքննարկվի նրանց տարեկան հաշվետվությունները և կներկայացվեն ատեստավորման:
Հաշվետու տարում ամբիոնի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության մոտեցումներն ու քաղաքականությունը, որքանով է այն նպաստել ուսանողակենտրոն ուսուցմանը:
Ուսումնառության արդյունքները և նրանց համապատասխան դասավանդման և ուսումնառության մոտեցումներն ու մեթոդները, ուսումնասիրությունները պարբերաբար քննարկվել են ամբիոնում, որոնք առավելապես վերաբերում են դասավանդման նյութերի արդիականացման շուրջ կատարված աշխատանքներին, դասավանդման և ուսումնառության մեթոդների արդյունավետությանը: Ամբիոնի դասախոսները դասաժամերի ընթացքում օգտվում են անհրաժեշտ տեխնիկայից, ցուցադրում եմ PP ներկայացումներ, տեսանյութեր, հետևողական են և նյութերը շաբաթական մուտքագրում են Google classroom էլեկտրոնային հարթակում, ապահովում են հետադարձ կապն ուսանողների հետ: Դասախոսությունները և ուսումնական պարապմունքները կազմակերպվում են փոխգործուն մեթոդների կիրառմամբ՝ «Մտքերի տարափ», «Բանավեճ», «Դերային խաղ» և այլ մեթոդներով: Ուսուցանվող նյութի յուրացումն իրականացվում է խմբային առաջադրանքների կատարման միջոցով՝ «Ջիքսոյի», «Իրավիճակների վերլուծություն», «Գործնական խաղ» համագործակցային ուսուցման մեթոդներով: Ուսանողների ուսումնական ձեռքբերումները բացահայտվում են «Հեղինակի աթոռ», «Վեննի դիագրամ», «ԳՈՒՍ», «Կարճ շարադրություն» ինքնագնահատման մեթոդներով:Հաշվետու տարում ուսումնական գործընթացը covid-19 համավարակով պայմանավորված կազմակերպվել է հիբրիդային տարբերակով՝ բոլոր կուրսերը շաբաթվա ընթացքում ունեցել են և՛ առերես, և՛ առցանց դասերի օրեր՝ ըստ դասացուցակի: Մանկավարժական պրակտիկաները կազմակերպվել են առերես, իսկ թղթապանակների պաշտպանությունները նախատեսվում են իրականացնել առցանց տարբերակով՝ 2022 թ. հունվար ամսին:
Հաշվետու տարում ամբիոնում կիրառված ուսանողների գնահատման համակարգը, գնահատման բաղադրիչների ձևավորման մոտեցումները, ուսումնառության արդյունքներից հետ կապը և ակադեմիական ազնվության ապահովմանն ուղղված աշխատանքները:
Յուրաքանչյուր առարկայի ուսումնառության արդյունքները ստուգվում են տվյալ առարկային համապատասխան ստուգման ձևերով /բանավոր և գրավոր ստուգողական աշխատանք, ռեֆերատ, ներկայացում, թղթապանակ, թեստային աշխատանք/: Նշված ստուգման ձևերից յուրաքանչյուրն ունի իր հստակ պահանջները, որոնք նախապես

տրամադրվում են ուսանողներին՝ հարցաշարերը տեղադրվում են դասընթացի էլեկտրոնային հարթակ:

- Բանավոր, գրավոր ստուգողական և թեստային աշխատանքները գնահատվում են ըստ հարցերի համար նախատեսված միավորների /ընդամենը 100 միավոր/, հարցի բարդության և բովանդակության:
- Ռեֆերատ, կուրսային, ավարտական և մագիստրոսական աշխատանքների գնահատման համար ամբիոնում առկա են համապատասխան գնահատման բաղադրիչները, որոնք նույնպես նախապես տրվում են ուսանողներին:
- Թղթապանակը և ներկայացումը գնահատվում է ըստ ուսանողների ներկայացրած սահիկի, հաշվի առնելով ուսանողի ինքնուրույն և ստեղծագործական վերլուծությունները առաջադրված թեմաների շուրջ:
- Ընթացիկ ստուգման բաղադրիչի մեջ ըստ ամբիոնի որոշման որոշակի տոկոսային գնահատման մաս է կազմում էլեկտրոնային գնահատվող հանձնարարությունը: Մեկ գնահատվող հանձնարարությունը մինչև կիսամյակի վերջ պարտադիր է բոլոր դասընթացների համար:

Գնահատման բաղադրիչները տոկոսային տարբերակով համապատասխանեցվում են տեղեկատվական կենտրոնի կողմից ներկայացված և տեղադրված տոկոսներին:

Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ուղղությամբ ընդունված որոշումները և հաստատված մեխանիզմները:

Ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերից կառանձնացնենք.

- ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի վերնագրերի, դրանց աշխատանքների կատարման ընթացի մասին քննարկումները, որոնք կազմակերպվում են google classroom հարթակի համապատասխան էջերում:
- պրակտիկաների կազմակերպման, մանկապարտեզների ընտրության քննարկման հարցը:
- «Ծախմատ գիտահետազոտական ինստիտուտի» և ՖԻԴԵ-ի համագործակցության արդյունքում «Ծախմատը նախադպրոցական ուսումնական հաստատություններում» ծրագրի իրականացման աշխատանքների կազմակերպման, ստացված արդյունքների քննարկման հարցը:
- Նախադպրոցական կրթության պետական չափորոշիչների վերանայման աշխատանքային խմբում ամբիոնի դասախոսներ՝ Հ.Խաչատրյանի, Ա.Դալլաքյանի , Մ.Ամիրաղյանի և Ա. Խուգեյանի մասնակցության և արդյունքների քննարկման հարցը:

Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ուղղությամբ ընդունված որոշումները և հաստատված մեխանիզմները:

Արձ.N, ամսաթիվ	Քննարկման հարցերը	Ընդունված որոշումները
Հունվար 25, արձանագրություն թիվ 6	1. 2020-2021 ուս. տարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի կազմակերպման հարցը: 2. Հեռակա 1-ին կուրսի 1-ին և 2-րդ կիսամյակների դասընթացների կազմակերպման հարցը: 3. 2020-2021 ուս.տարվա 2-րդ կիսամյակում դասավանդվող առարկաների ուսումնամեթոդական փաթեթների, առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների հաստատման և	1.Հաստատել 2020-21 ուստարվա 2-րդ կիսամյակի քննական առարկաների տոմսերը: 2.Ըստ ներկայացված դասացուցակի կազմակերպել հեռակա 1-ին կուրսի 1-ին և 2-րդ կիսամյակների դասընթացները, քլասրում էլ հարթակում բացել դասընթացների էջերը: 3.Հաստատել 2020-2021 ուս.տարվա 2-րդ կիսամյակում դասավանդվող առարկաների ԱՈՒՄՓ-ները: Ամբիոնի քլաս էջով տեղադրել բոլոր առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները

	google classroom ներբեռնելու հարցը: 4. 2020-2021 ուս տարվա 2-րդ կիսամյակում դասավանդվող առարկաների միջանկյալ ստուգման և քննական հարցաշարերի հաստատման հարցը:	համապատասխան էջերում: 4.Հաստատել քննական հարցաշարերը:
Փետրվար 21, արձանագրություն թիվ 7	1. Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ԲԿԾ 2-րդ կուրսի 2-րդ կիսամյակի ուսումնաճանաչողական պրակտիկայի նախապատրաստման, կազմակերպման հարցը: 2. ՄԿԾ 2-րդ կուրսի մագիստրոսական թեզերի ընթացիկ հաշվետվությունների ներկայացում՝ ուսանողների և ղեկավարների ներգրավմամբ: 3. Ընթացիկ հարցեր: ● Գեղարվեստական կրթության ֆակուլտետի Երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոս, մ.գ.թ. Աննա Սիմոնյանի «Ավագ նախադպրոցականի ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման հնարավորություններն առարկայական զարգացնող միջավայրի պայմաններում» ուսումնամեթոդական ձեռնարկի քննարկման և Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի կողմից հրատարակման երաշխավորության ներկայացնելու հարցը:	1.Պրակտիկայի ղեկավար Ա.Ղազարյանը նախապատրաստական կոնֆերանսին ներկայացրեց ուսումնաճանաչողական պրակտիկայի ղեկավարներին և խմբերին, ինչպես նաև մանկապարտեզները: Քլասրում էլ հարթակում ըստ խմբերի բացվել են համապատասխան քլաս էջեր: 2.ՄԿԾ 2-րդ կուրսի ուսանողները ներկայացրեցին մագիստրոսական թեզի վերաբերյալ հաշվետվությունները, բոլոր աշխատանքները վերջնական փուլում են: 3.Նկատի ունենալով Ա.Սիմոնյանի ուսումնամեթոդական ձեռնարկի տեսագործնական նշանակությունը՝ դրական կարծիքով այն ներկայացնել ֆակուլտետի խորհուրդ, հրատարակման երաշխավորություն ստանալու համար:
Մարտ 15, արձանագրություն թիվ 8	1. Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ԲԿԾ առկա 3-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի ընթացքը: 2. Հեռակա ուսուցման համակարգի ԲԿԾ 5-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկայի կազմակերպում: 3. ԲԿԾ առկա 4-րդ և հեռակա 5-րդ կուրսերի ավարտական աշխատանքների և ՄԿԾ 2-րդ	1.Պրակտիկայի ղեկավար Ա.Ղազարյանը ներկայացրեց պրակտիկայի բնականոն ընթացքը: 2.Նախապատրաստական կոնֆերանսի ընթացքում ներկայացվեցին պրակտիկայի ղեկավարները, ուսանողները և մանկապարտեզները: Աշխատող ուսանողներն ըստ պրակտիկայի կանոնակարգի և ներկայացրած փաստաթղթերի՝ մանկավարժական պրակտիկան կանցկացնեն իրենց աշխատավայրում: 3.Կազմակերպել ավարտական աշխատանքների և մագիստրոսական

	կուրսերի մագիստրոսական թեզերի կատարման ընթացքը: 4. Ընթացիկ հարցեր:	թեզերի նախնական քննարկում:
Ապրիլ 12, արձանագրություն թիվ 9 և 10	1. Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ՄԿԾ 2-րդ կուրսի մագիստրոսական թեզերի և ԲԿԾ առկա ուսուցման համակարգի 4-րդ կուրսի ավարտական աշխատանքների նախապաշտպանության արդյունքների քննարկում և հրապարակային պաշտպանության երաշխավորելու հարցը: 2. Google classroom էլեկտրոնային հարթակում դասախոսների աշխատանքների մշտադիտարկումների արդյունքների մասին: 3. Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ՄԿԾ առկա ուսուցման համակարգի 1-ին կուրսի մանկավարժահետազոտական պրակտիկայի նախապատրաստման, կազմակերպման հարցը: 4. Ընթացիկ հարցեր:	1. Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ՄԿԾ 2-րդ կուրսի մագիստրոսական թեզերի և ԲԿԾ առկա ուսուցման համակարգի 4-րդ կուրսի ավարտական աշխատանքների նախապաշտպանության արդյունքների հիման վրա երաշխավորել հրապարակային պաշտպանության: 2.Ամբիոնի մասնագետ Թ.Նալբանդյանը մշտադիտարկել է classroom էլ. հարթակի աշխատանքները և ներկայացրել արդյունքները: 3.Նախապատրաստական կոնֆերանսի ընթացքում ներկայացվեցին պրակտիկայի ղեկավարները, ուսանողները և պրակտիկայի ընթացակարգը՝ ըստ ներկայացված դասացուցակի: 4.Հաստատել ամբիոնի 2020-21 ուս.տարվա հայցորդ Հեղինե Ավետիսյանի ատենախոսության թեման հետևյալ վերնագրով «Ինտերակտիվ պարապմունքների կլաստերային վերլուծությունը նախադպրոցական հաստատություններում», և գիտական ղեկավար նշանակել՝ մ.գ.թ. դոցենտ Հ.Սարգսյանին:
Մայիս 6, արձանագրություն թիվ 11	1. Հեռակա ուսուցման համակագի 5-րդ կուրսի ուսանողների ավարտական աշխատանքների նախապաշտպանության արդյունքների ներկայացում և հրապարակային պաշտպանության երաշխավորելու հարցը: 2. Ամփոփիչ ավարտական քննությունների նախապատրաստական աշխատանքների ընթացքի մասին: 3. 2020-2021 ուս.տարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի	1.Նախապաշտպանության արդյունքների հիման վրա երաշխավորել հեռակա 5-րդ կուրսի ավարտական աշխատանքները, բացի 8 ավարտական աշխատանքից, որոնք ունեին շտկումներ և թերացումներ: Նրանց համար որոշվեց կազմակերպել կրկնակի նախապաշտպանություն, որի արդյունքում երաշխավորվեցին պաշտպանության: 2.Նախապատրաստվել ամփոփիչ ավարտական քննություններին, որոնք կազմակերպվելու են առցանց տարբերակով: 3.Հաստատել 2-րդ կիսամյակի քննական առարկաների հարցաշարերն ու տոմսերը:

	նախապատրաստում: 4. Ընթացիկ հարցեր:	
Հունիս 2, արձանագրություն թիվ 12	1. Ամփոփիչ ավարտական քննությունների արդյունքների քննարկում: 2. Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ԲԿԾ 2-րդ և 3-րդ կուրսերի ուսումնաճանաչողական պարկտիկաների պաշտպանության, հաշվետվությունների ներկայացման արդյունքների մասին: 3. ՖԻԴԵ-ի և Ծախմատ գիտահետազոտական ինստիտուտի համագործակցության արդյունքում Ծախմատը նախադպրոցական հաստատություններում ծրագրի մեկնարկի և դաստիարակների վերապատրաստումների կազմակերպման մասին: 4. Ընթացիկ հարցեր	1. Ամփոփիչ ավարտական քննությունների արդյունքներն ընդունել ի գիտություն: 2. Նշված կուրսերի ուսումնաճանչողական և մանկավարժական պրակտիկաների պաշտպանությունները կազմակերպվել էր առցանց՝ քլասրում էլ. հարթակում: 3. ՖԻԴԵ-ի և Ծախմատ գիտահետազոտական ինստիտուտի համագործակցության արդյունքում որոշվեց, որ ամբիոնի ողջ անձնակազմը կմասնակցի դաստիարակների վերապատրաստման ծրագրին, կկազվի համապատսխան վերապատրաստման ծրագիր: 4.Հաստատել ամբիոնի հայցորդ Ժաննա Հարությունյանի ատենախոսության թեման հետևյալ վերնագրով «Ծախմատային նախագիտելիքի ձևավորման մանկավարժական պայմաններն ավագ նախադպրոցական տարիքում», և գիտական ղեկավար նշանակել՝ մ.գ.թ., պրոֆեսոր Ս.Մարությանին:
Օգոստոսի 28, արձանագրություն թիվ 1	1.Ամբիոնի դասախոսների 2021-2022 ուսումնական տարվա առարկայական ծանրաբեռնվածության ներկայացում: 2.Ամբիոնի գծով 2021-2022 ուս տարվա 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների classroom էլ հարթակում էջերի բացման, առարկայական նկարագրերի, առարկայական թեմատիկ տրոհումների հաստատման հարցը: 3.2021-2022 ուս տարվա 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների միջանկյալ ստուգման և քննական հարցաշարերի հաստատման հարցը: 4.Ֆիդե-ի, Ծախմատի գիտահետազոտական ինստիտուտի և ամբիոնի համագործակցությամբ	1.Ըստ առարկայական ծանրաբեռնվածության դասավանդվող առարկաները համակարգել ըստ բովանդակության և դասախոսի գիտական ու մեթոդական հետաքրքրությունների: 2. Հաստատել 2021-2022 ուս.տարվա 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների առարկայական նկարագրերն ու թեմատիկ տրոհումները /ծանրաբեռնվածությունը նախօրոք քննարկվել և ներկայացվել է/, երաշխավորել google classroom ներբեռնելու համար: 3. Հաստատել 2021-2022 ուս տարվա 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների միջանկյալ ստուգման և քննական հարցաշարերը: 4.Ամփոփել վերապատրաստման

	կազմակերպված «Ծախմատը նախադպրոցական հաստատություններում» վերապատրաստման դասընթացների ամփոփման և ամբիոնի աշխատակազմի կողմից մանկապարտեզներում մշտադիտարկումներ իրականացնելու աշխատանքների կազմակերպման հարցը:	արդյունքները, ներկայացնել ամփոփիչ հաշվետվություն, վերլուծել մշտադիտարկումների արդյունքները և ներկայացնել դրանք գիտական հոդվածների տեսքով՝ ֆիդեի կողմից կազմակերպվող «Ծախմատը կրթության մեջ» խորագրով միջազգային կոնֆերանսին:
Սեպտեմբերի 22, արձանագրություն թիվ 2	1. Ամբիոնի 2021-2022 ուսումնական տարվա աշխատանքային պլանի քննարկում և հաստատում: 2.Առկա բակալավրի ավարտական աշխատանքների և մագիստրոսական ատենախոսությունների թեմաների քննարկման և հաստատման հարցը: 3. 2021-2022 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի պրակտիկաների կազմակերպման վերաբերյալ քննարկման և առաջարկություններ կատարելու հարցը: (ԲԿԾ առկա 3-րդ կուրս՝ ուսումնաճանաչողական պրակտիկան /շաբաթական մեկ օր/ և ԲԿԾ առկա 4-րդ կուրս՝ ամփոփիչ ավարտական պրակտիկա /6 շաբաթյա/) 4. 2021-22 ուստարվա 1-ին կիսամյակի դասալսումների ժամանակացույցի և կազմակերպման քննարկման հարցը: 5. Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի 100-ամյակի նախապատրաստական աշխատանքների քննարկման հարցը: 6. Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտությամբ հեռակա ուսուցման մագիստրոսական կրթական ծրագրի ամբողջական փաթեթի վերանայման և ՀՀ ԿԳՄՍ նախարարություն ներկայացման հարցը: 7.Ընթացիկ հարցեր:	1. Հաստատել 2021-2022 ուսումնական տարվա աշխատանքային պլանը: 2. Քննարկել և հաստատել 2021-2022 ուսումնական տարվա ավարտական աշխատանքների և մագիստրոսական ատենախոսությունների թեմաները և ղեկավարներին: 3. Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ԲԿԾ առկա ուսուցման համակարգի 3-րդ կուրսի 2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակի ուսումնաճանաչողական պրակտիկան կազմակերպել ս/թ. սեպտեմբերի 14-ից մինչև դեկտեմբերի 21-ը (շաբաթական մեկ օր)՝ առերես: 4-րդ կուրսի 2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակի մանկավարժական պրակտիկան կազմակերպել ս/թ. հոկտեմբերի 11-ից մինչև նոյեմբերի 19-ը: 4. Քննարկել և հաստատել 2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակի դասալսումների կազմակերպման ժամանակացույցը: 5.Քննարկել ՀՊՄՀ-ի 100-ամյակին նվիրված միջոցառումների ցանկը: 6. Կազմել և ԿՄԳՍՆ ներկայացնել Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտությամբ հեռակա ուսուցման մագիստրոսական կրթական ծրագրի ամբողջական փաթեթը:
Հոկտեմբերի 21, արձանագրություն թիվ 3	1. Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա մագիստրատուրա 2-րդ կուրսի	1. Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա մագիստրոսի կրթական ծրագրի

	մանկավարժահետազոտական պրակտիկայի առցանց կազմակերպման հարցը (3 շաբաթ): 2. Հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսի ավարտական աշխատանքի թեմաների և ղեկավարների քննարկման և հաստատման հարցը: 3. Ամբիոնի դասախոսների 2021 թվականին հրատարակած հոդվածների, գիտաժողովների նյութերի, գրքերի, ձեռնարկների, դասագրքերի քննարկման և ներկայացման հարցը: 4. 2021-2022 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի 1-5 կուրսերի 1-ին և 2-րդ կիսամյակների ամբիոնի գծով դասավանդվող դասընթացների Google classroom էլ.հարթակում էջերի ստեղծման, առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների, ուսումնական նյութերի ներբեռնման քննարկման հարցը: 5.Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա բակալավրի 4-րդ կուրսի ավարտական աշխատանքների և մագիստրատուրա 1-ին և 2-րդ կուրսերի մագիստրոսական թեզերի google classroom էլ. հարթակում ստեղծված էջերում աշխատանքների կազմակերպման հարցը: 6.Ընթացիկ հարցեր:	առկա ուսուցման համակարգի 2-րդ կուրսի ուսանողների 2021-22 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի մանկավարժահետազոտական պրակտիկան նախատեսվում է կազմակերպել նոյեմբերի 2-ից մինչև 20-ը ՀՊՄՀ սկզբնական կրթության ֆակուլտետի Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա բակալավրի կրթական ծրագրի 1-ին, 2-րդ և 3-րդ կուրսերում՝ ըստ դասացուցակի: 2. Քննարկել և հաստատել ԲԿԾ հեռակա ուսուցման համակարգի Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա 5-րդ կուրսերի ավարտական աշխատանքերիի թեմաները և ղեկավարներին: 3. Քննարկել և հաստատել ամբիոնի դասախոսների 2021 թվականին հրատարակած հոդվածների, գիտաժողովների նյութերի, գրքերի, ձեռնարկների, դասագրքերի ցանկը, տեղադրել համապատասխան ձևաչափում և ներկայացնել գիտահետազոտական կենտրոն: 4. Հաստատել 2021-2022 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի 1-5 կուրսերի 1-ին և 2-րդ կիսամյակների ամբիոնի գծով դասավանդվող դասընթացների Google classroom էլ.հարթակում էջերի ստեղծման, առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների, ուսումնական նյութերի, գնահատվող առաջադրանքների տեղադրման աշխատանքները ըստ ներկայացված ժամանակացույցի կազմակերպելու աշխատանքները: 5. Ամբիոնի էլեկտրոնային էջով ակտիվացնել ավարտական կուրսերի և ՄԿԾ 1-ին կուրսի համար նախատեսված խորհրդատվությունների էլեկտրոնային էջեր, հրավիրել համապատասխան դասախոսներին և ուսանողներին, աշխատանքներն

		էլ.հարթակում առավել արդյունավետ և հետադարձ կապի պահպանման հնարավորությամբ: 6. Ամբիոնի վարիչի զեկուցագրի և ֆակուլտետի դեկանի միջնորդագրի արդյունքում ամբիոնի դոցենտ, մ.գ.թ. Ալլա Դալլաքյանին շնորհվեց ամբիոնի պրոֆեսորի կոչում:
Նոյեմբեր 22, արձանագրություն թիվ 4	1. Խարկովի ազգային մանկավարժական համալսարանի գիտաժողովի կազմակերպչական հարցերի քննարկում, ինչպես նաև նույն համալսարանի ամսագրի խմբագրական խորհրդում Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի մասնագետների ներկայացում (Ս.Մարության և Հ.Սարգսյան): 2. Հեռակա 1-ին կուրսի առցանց խորհրդատվությունների կազմակերպման հարցը: 3. Նախադպրոցական ոլորտի մասնագետների վերապատրաստման ծրագրի ներկայացման, քննարկման և հաստատման հարցը: 4. Ընթացիկ հարցեր:	1. Ներկայացված առաջարկությունն ընդունել ի գիտություն: Շարունակել համագործակցությունը Խարկովի ազգային մանկավարժական համալսարանի հետ: 2. Կազմակերպել հեռակա 1-ին կուրսի առցանց խորհրդատվությունները՝ ըստ ուղարկված ժամանակցույցի: 3. Ամբիոնի դասախոսներ Ս.Մարությանը, Մ.Ամիրաղյանը, Մ.Ավագյանը, Ս.Մանուչարյանը, Ի.Պոնոմարենկոն, Ա.Ղազարյանը 2021 թվականի տարբեր ժամանակահատվածներում, որպես վերապատրաստողներ, մասնակցել են Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպած «Դաստիարակների, մեթոդիստների և տնօրենների վերապատրաստման» դասընթացներին:
Դեկտեմբերի 8, արձանագրություն թիվ 5	1. 2021-2022 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի նախապատրաստման հարցը: 2.Դասախոսների 2021թ. գիտահետազոտական աշխատանքների և ընդհանուր գործունեության հաշվետվությունների ներկայացման հարցը: 3.Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ՄԿԾ 2-րդ կուրսերի մագիստրոսական թեզերի, ԲԿԾ առկա 4-րդ և ԲԿԾ հեռակա 5-րդ կուրսերի ավարտական աշխատանքների կատարման	1. Քննաշրջանը կազմակերպել ըստ ուղարկված ժամանակացույցի: 2.Հաստատել ամբիոնի դասախոսների 2021թ. գիտահետազոտական աշխատանքները և ներկայացնել գիտահետազոտական կենտրոն: 3.Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ՄԿԾ 2-րդ կուրսերի մագիստրոսական թեզերի, ԲԿԾ առկա 4-րդ և ԲԿԾ հեռակա 5-րդ կուրսերի ավարտական աշխատանքների կատարման ընթացքը ըստ ղեկավարների ներկայացման համարել բավարար, շարունակել ուղղորդել ուսանողներին: 4.2021-22 ուստարվա 1-ին կիսամյակի ուսումնական գործընթացը համարել

	ընթացքի մասին: 4.2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակում ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունքների վերաբերյալ հարցը: 5.Ընթացիկ հարցեր: -ամբիոնի դասախոս, մ.գ.թ. Մ.Ամիրաղյանին դոցենտի կոչման ներկայացնելու հարցը: 6.Ամբիոն հայցորդների ատեստավորման հարցը:	արդյունավետ, առանց բաղթողումների և առաջացած խնդիրները արդյունավետ լուծելու ուղղությամբ: 5.Հաշվի առնելով Մարիաննա Գիգոլի Ամիրաղյանի՝ մ.գ.թ-ի գիտական աստիճան շնորհելուց հետո ունեցած գիտամանկավարժական, ուսումնամեթոդական աշխատանքները («Նախադպրոցական հաստատություններում (4-6 տարեկան երեխաների) օտար լեզվի դասավանդման կրթական ծրագիր», «Անգլերենը փոքրիկների համար (4-6 տարեկաններ)» ձեռնարկը), տպագրված հոդվածները, այդ թվում և անձնային կարողունակությունները՝ երաշխավորել նրան զբաղեցնելու Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի դոցենտի հաստիքը: Ամբիոնի որոշումը ներկայացնել Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհուրդ: 6. Ատեստավորել ամբիոնի հայցորդներ՝ Մ.Աբասյանին, Լ.Ղազարյանին և Ժ.Հարությունյանին՝ ներկայացված հաշվետվությունների հիման վրա:

Պրոֆեսորադասախոսական կազմը								
	Կանայք	Դոկտոր	Պրոֆեսոր	Գիտ. թեկն.	Դոցենտ	Ասիս-տենտ	Դասախոս	Ընդ-նը
Հաստիքային	8	1	1		4	1,5	2,25	10
Համատեղող	1				1			1
Ժամավճարային								
Ընդա-մենը	9	1	1		5	1.5	2.25	11

2. ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնի ուսումնամեթոդական գործունեությունը հաշվետու տարում:
Ուսումնամեթոդական աշխատանքն ամբիոնում կազմակերպվում է երեք ուղղությամբ.. 1. Աշխատանք 1-ին կուրսեցիների հետ, ծանոթացնում ենք նրանց ինչպես օգտվել google classroom էլ.հարթակից, մասնագիտական գրականությունից, ինչպես ընտրել հիմնական հասկացություններ, բանալի բառերը, ինչպես օգտվել համապատասխան նյութերից, ինչպես հայերեն, այնպես էլ այլ լեզուներով, պարզաբանել հասկացություններն ըստ մանկավարժության տեսակետի: 2. Հաջորդ փուլը 2-րդ և 3-րդ կուրսերի հետ տարվող ուսումնամեթոդական աշխատանքն է՝ ռեֆերատների, կուրսայինների տեսքով: Ղեկավարները ծանոթացնում են տվյալ հանձնարարության մեթոդական համակարգին, ինչպես պետք է ապահովել ակադեմիական ազնվությունը՝ ճիշտ հղումներով ցույց տալով օգտագործած գրականությունունը: 3. Հատկապես կենտրոնացված մեթոդական աշխատանք է տարվում ավարտական և

մագիստրոսական կուրսերում՝ կրկին շեշտը դնելով ակադեմիական ազնվության վրա, ներառելով տվյալ խնդրին վերաբերող վերջին հրատարակումները:

Կուրսայինների, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի համար ստեղծվել են համապատասխան էլեկտրոնային էջեր, որտեղ տեղադրված են խորհրդատվությունների գրաֆիկները, որով էլ առաջնորդվում են դասախոսները և ուսանողները:

Ամբիոնի աշխատակիցների ուսումնամեթոդական հրատարակումների քանակը					
Դասագրքեր			Ուսումնական ձեռնարկներ		
ՀՊՄՀ դասիչով	ՀՀ ԿԳՄՍՆ դասիչով	Այլ դասիչներով	ՀՊՄՀ դասիչով	ՀՀ ԿԳՄՍՆ դասիչով	Այլ դասիչներով
	3			2	1

Ամբիոնի մեթոդական կոնֆերանսների և սեմինարների քանակը									
Միջազգային		Հանրապետական		Քաղաքային		Համալսարանական		Ամբիոնային	
կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.
4									

Գիտաուսումնական և գիտամեթոդական դրամաշնորհներ			
Անվանում	Ժամկետ	Ֆինանսավորման ծավալ	Ամբիոնի մասնակից-անդամների քանակ
-			

3. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ամբիոնի հետազոտական գործունեությունը:

2021-2022 ուսումնական տարում ամբիոնն իր հետազոտական գործունեությունը պլանավորել և կազմակերպել է նախադպրոցական կրթության 21-րդ դարի պարադիգմային համապատասխան, առավելապես շեշտադրելով նախադպրոցական կրթության հեռանկարային զարգացման միտումները ՀՀ-ում, հիմք ընդունելով նախադպրոցական կրթության ոլորտում համաշխարհային առկա փորձը, տեսական և հետազոտական փորձարարությունները տարիքային տարբեր փուլերում:

Ամբիոնի 2021-2022 ուս.տարվա գիտահետազոտական աշխատանքների հիմնական ուղղություններն են.

1. Նախադպրոցական կրթության արդի վիճակի և զարգացման հեռանկարների գիտական հետազոտումը, «Գիտություն-պրակտիկա» կապի ամրապնդումը.

Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը յուրաքանչյուր ուս.տարվա համար ներկայացնում է գիտական, մեթոդական և հետազոտական աշխատանքների ցանկը: Ամբիոնի դասախոսները պարբերաբար մասնակցում են տարբեր սեմինարների, *մասնագիտական գիտաժողովների*, վերապատրաստման դասընթացների: Ամբիոնի դասախոսներ Ս.Մարությանը, Ա.Ղազարյանը, Մ.Ամիրաղյանը, Մ.Ավագյանը, Ա.Դալլաքյանը, Ա.Խուգեյանը, Ի.Պոնոմարենկոն որպես վերապատրաստողներ պարբերաբար մասնակցում են նախադպրոցական մանկավարժների մասնագիտական որակների բարելավման վերապատրաստումներին: Մշակված նյութերի շուրջ դասախոսները պարբերաբար հրատարակում են գիտական հոդվածներ տարբեր գիտաժողովներում:

2021 թվականին ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմն ունի տպագրված 1 ուսումնամեթոդական գիրք, 2 ձեռնարկ-ծրագիր, 2 ցիտվող և 10 տպագրված հոդված:

2.*Ամբիոնի համագործակցությունը միջազգային ԲՈՒՀ-երի համապատասխան ամբիոնների հետ.*

Ամբիոնը սերտ համագործակցում է միջազգային մի շարք ԲՈՒՀ-երի՝ Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի, Բելոռուսի Մ.Տանկի անվան պետական մանկավարժական համալսարանի, Գ.Ս.Սկովորոդի անվան Խարկովի ազգային պետական մանկավարժական համալսարանի, Սանկտ Պետերբուրգի Գերցենի անվան ռուսական պետական մանկավարժական համալսարանի համապատասխան ամբիոնների հետ:

3.Ամբիոնի գիտահետազոտական կարևորագույն ուղղություն է նաև ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ համագործակցությունը, որի շրջանակում 2019 թվականից սկսած ամբիոնը մասնակցություն է ունեցել «Նախադպրոցական կրթության մասին ՀՀ օրենքի» փոփոխությունների և օրենքի նոր ձևաչափի քննարկման աշխատանքներին, ամբիոնային քննարկումների արդյունքները գրավոր ներկայացվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության համապատասխան բաժին: 2020 թվականին ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Կրթական ծրագրերի կենտրոն» ՃԻԳ-ի և Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի համագործակցության արդյունքում կազմակերպվել էր «Նախակրթարանի դաստիարակների վերապատրաստման» 8-օրյա առցանց դասընթաց, որին մասնակցել էին ամբիոնի ողջ պրոֆեսորադասախոսական կազմը: 2021 թվականին նախադպրոցական կրթության պետական չափորոշիչների վերանայման աշխատանքային խմբում ընգրկվել են ամբիոնի մասնագետներ՝ Ա.Դալլաքյանը, Հ.Խաչատրյանը, Մ.Ամիրաղյանը և Ա.Խուգեյանը: Չափորոշիչների արդյունքների գիտական հիմնավորումները պատրաստ են հրատարակման:

4.Ամբիոնն իր գիտահետազոտական աշխատանքների շրջանակում 2021-2022 ուս.տարում ընդգրկել է նաև «Ծախմատը նախադպրոցական ուսումնական հաստատություններում» խորագրով ուղղությունը, որը ՖԻԴԵ-ի և Ծախմատ գիտահետազոտական ինստիտուտի համագործակցության արդյունք է: Ամբիոնի ողջ անձնակազմը մասնակցել է վերապատրաստման աշխատանքներին և իրականացրել է երեք փուլով մշտադիտարկումներ վերապատրաստմանը ներագրված 3 մանկապարտեզներում, արդյունքները ներկայացվել են ՖԻԴԵ հաշվետվությունների տեսքով: 2021 թվականին innostud.am էլեկտրոնային հարթակում «Ծախմատը նախադպրոցական ուսումնական հաստատություններում» ծրագրի շրջանակում մշակվել են շախմատային բովանդակությամբ 30 և ավել էլեկտրոնային խաղ-առաջադրանքներ:

5.Հաջորդ գիտահետազոտական ուղղությունը նախադպրոցական կրթության առաջանցիկ զարգացումների ուսումնասիրումն է, որը առաջնային կապվում է երեխայի խաղային գործունեության հետ՝ նորագույն խաղային տեխնոլոգիաների կիրառման և այս ոլորտում տեղեկատվական բազան հարստացնելու հետ, որոնց ուղղությամբ ներդրվել են.

- Ն.Զայցևի մեթոդական համակարգը (խոսքի զարգացման ուղղությամբ)
- մենթալ թվաբանություն (աբակուսի):
- Այս ուղղություններով ևս պատրաստվում են գիտական հոդվածներ ավագ նախադպրոցականների խոսքի զարգացման և տարրական մաթեմատիկական պատկերացումների ձևավորման մեթոդիկաների ուղղությամբ:
- Այս առումով կարևորվում է ամբիոնին կից «Խաղի և խաղալիքի գիտահետազոտական կենտրոնի» գործունեությունը, որը հիմնականում նախատեսվում է իրականացնել հետևյալ ուղղություններով.
- խաղալիքների ընտրության և գիտական հիմնավորման,
- խաղերի և խաղալիքի համապատասխանության,
- յուրաքանչյուր տարիքային խմբի համապատասխան կատալոգների ստեղծման,
- ուսանողների նախապատրաստումը մանկավարժական պրակտիկային՝ ներառելով խաղային գործունեության կազմակերպման և պլանավորման հարցերը:

6.Ամբիոնի գիտահետազոտական հաջորդ ուղղությունը նախադպրոցական կրթության ոլորտում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ներդնումն է: Այս առումով, կարևորվում է «Նախադպրոցական և տարրական կրթության արդիականացում ժամանակի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստման միջոցով» ծրագիրը, որի աշխատանքներին ներառված են ամբիոնի դասախոսներ Ս.Մարությանը, Մ.Ամիրաղյանը, Ա.Խուգեյանը և Ի.Պոնոմարենկոն:

Ամբիոն ՊԴԱ և ուսանողների գիտակահետազոտական աշխատանքները, հրապարակումները, անցկացրած կոնֆերանսները, սեմինարները, օլիմպիադաները հաշվետու տարում:

Ամբիոնի դասախոսական կազմը սերտորեն համագործակցում է ուսանողների հետ, ուղղորդում նրանց՝ գիտահետազոտական աշխատանքների գործընթացում: 2021 թվականին ֆակուլտետը կազմակերպել էր «Սկզբնական կրթության արդի հիմնախնդիրները» միջազգային առցանց գիտաժողով, որին մասնակցել էին ամբիոնի

դասախոսներ և ուսանողներ բակալավրից և մագիստրատուրայից: Բացի դա, ամբիոնն աջակցում է այն ուսանողներին, ովքեր ցանկանում են գրել գիտական հոդվածներ:ԲՈՒՀ-ի 100-ամյակի կազմակերպչական ծրագրում ևս նախատեսվում է կազմակերպել ուսանողական գիտաժողով: Ամբիոնը ֆակուլտետի հետ միասին կազմակերպել է 2021-2022 ուս տարվա 1-ին կուրսեցիների օնլայն հարթակից օգտվելու և հեռավար դասընթացների բոլոր առանձնահատկությունների վերաբերյալ սեմինար: Մանրակրկիտ ներկայացվել է քլասրումի գործիքակազմը, միթով դասերին միանալու ձևաչափը:
Ամբիոնի հաշվետու տարում իրականացրած հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման միջոցառումները:
Հաշվետու տարում ուսուցման հիբրիդային պայմաններում ապահովվել է իրականացվող պրակտիկայի և ուսումնասիրվող դասընթացների կապը, ներկայացվող պահանջները, որոնցից ձեռք բերված արդյունքներն արտացոլվում են ուսանողների կողմից իրականացվող հետազոտություններում (ռեֆերատ, կուրսային, ավարտական, մանկավարժական իրավիճակների վերլուծություն): Ինչպես նաև «Շախմատը նախադպրոցական հաստատություններում» ծրագրի վերապատրաստումներից հետո, դասախոսական կազմի առաջարկները և կազմած ծրագրերը, ուսումնական նյութերը կրառվել են գործնականում և ներառվել դասվանդվող առարկաների բովանդակության մեջ:

Ա. Պրոֆեսորադասախոսական

Ամբիոնի գիտական ուղղություններ /նաև՝ տնտ, պայմանագրային, դրամաշնորհային/				
Ուղղության անվանումը	Աշխ-ի տեսակը	Ֆին.աղբյուր	Ֆին.ծավալ	Կատարողներ
	Հիմնարար			
	Կիրառական			

ՊԴԱ-ի կողմից հրատարակված մենագրություններ			
Հեղինակ Ա.Ա.Հ.	Մենագրության անվանումը	Հր.անուն և տարի	Ծավալ

Ամբիոնի աշխատակիցների գիտական հոդվածներ և ժողովածուներ, զեկույցներ և թեզիսներ		
Հեղինակ Ա.Ա.Հ.	Հոդվածի , զեկույցի անվանումը	Ծավալ
Tahir BAZAROV, Srbuhi GEVORGYAN, Vladimir KARAPETYAN, Nazakat KARIEVA, Larisa KOVALENKO, Alla DALLAKYAN	MODIFICATION OF THE CONCEPT OF TRUST IN THE ORGANIZATION	4 էջ
Karapetyan V.S. Dallakyan A.M. Kobylianska I.V.	FACTORS OF STIMULATING THE PLAYING ACTIVITY OF MODERN PRESCHOOLERS	7 էջ
Հեղինե Խաչատրյան, Սերոբ Խաչատրյան, Նաիրա Մովսիսյան	Քննադատական մտածողության տարրերի արտացոլումը <<Շախմատ>> ուսումնական առարկայի չափորոշիչներում	9 էջ
Варданян Ю. В., Карапетян В. С., Овакимян К. С., Абасян М. А.	СОЦИАЛЬНОЕ РАЗВИТИЕ И ПСИХОЛОГИЧЕСКАЯ СОВМЕСТИМОСТЬ В СОВРЕМЕННОМ МИРЕ	6 էջ

Ամբիոնի գիտական սեմինարներ	
Սեմինարի անվանումը	Անցկացման վայրը, օրը
«Շախմատը նախադպրոցական ուսումնական հաստատություններում» վերապատրաստման ծրագիր	Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ, Շախմատ գիտահետազոտական ինստիտուտ, հունիսի 15-ից հուլիսի 26-ը

Ամբիոնի աշխատակիցների կողմից պաշտպանված ատենախոսություններ

Ա.Ա.Հ.	Թեկն/դոկտորական-մասնագիտություն	Պաշտպ-ն ամսաթիվ	ԲՈԿ-ի հաստատում

Ամբիոնի ՊԴԱ-ի որակավորման բարձրացման և վերապատրաստման տարեկան գրաֆիկ			
Դասախոս Ա.Ա.Հ./հաստիք	ՈԲ-ի անցկացման հաստատություն	ՈԲ ժամկետները	Արդյունք

Բ. Ուսանողական

Ուսանողական գիտական հետազոտական ընկերություններ և խմբակներ			
Կամավորական գործունեություն ՈՒԽ հետ համատեղ աշխատանքների կազմակերպում	2021 թվականի դեկտեմբեր ամսվա վերջում ամբիոնը նախաձեռնել է ամանորյա ծրագիր՝ այց հատուկ դպրոց:		

Համատեղ գիտահետազոտական աշխատանքներ			
Դասախոս Ա.Ա.Հ.	Ուսանող Ա.Ա.Հ.	Հոդվածի անուն	Հրատ.անվ-մ
Ղազարյան Արմենուհի	Գոհար Մանուկյան	ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՀԵՏ ԾԱՆՈԹԱՑՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ	Հանձնված է տպագրության Սկզբնական կրթության արդի հիմնախդնիրները միջազգային գիտաժողովի նյութեր ժողովածույում
Ասմարյան Քնարիկ	Հեղինե Ուլուխանյան	ՇԱՐԺԱԽԱՂԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՆՈՒՀ-ՈՒՄ	

Ուսանողական գիտական կոնֆերանսների կազմակերպում և ուս. զեկույցներ		
Կոնֆերանս/ միջազգ., հանրապ., բուհական/	Կոնֆերանսի անվանում/ կազմակերպիչ	Ուսանողական զեկույց / քանակ

Ուսանողական առարկայական օլիմպիադաներ, մրցույթներ			
Օլիմպիադայի մակարդակը	Մասնագիտական շրջանակ	Ուսանող քանակ	Մրցանակային տեղ/Ա.Ա.Հ.
Միջազգային			
Հանրապետական			
Տարածաշրջանային			

4. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնի արտաքին կապերի և միջազգայնացման աշխատանքների ընդհանուր նկարագրությունը և վերլուծությունը հաշվետու տարում:
Ամբիոնը սերտ համագործակցում է միջազգային մի շարք ԲՈՒՀ-երի՝ Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի, Բելոռուսի Մ.Տանկի անվան պետական մանկավարժական համալսարանի, Գ.Ս.Սկովորոդի անվան Խարկովի ազգային պետական մանկավարժական համալսարանի, Սանկտ Պետերբուրգի Գերցենի անվան ռուսական պետական մանկավարժական համալսարանի համապատասխան ամբիոնների հետ: Ամբիոնը պարբերաբար ստանում է այդ ԲՈՒՀ-երում իրականացվող գիտահետազոտական գործընթացների մասին տեղեկատվություն և մասնակցում է տարբեր միջազգային կոնֆերանսների և տպագրում է նախադպրոցական կրթության, նախադպրոցական

մանկավարժության մեթոդիկաների, տարիքային հոգեբանության, մանկավարժահոգեբանական, նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքում շախմատի ոլորտներին առնչվող հոդվածներ՝ տարբեր մակարդակ ունեցող ամսագրերում. SCOPUS, РИНЦ և այլն:

Համագործակցության արդյունքում կան տպագրված համատեղ գիտական հոդվածներ:

- Ուկրաինայի Խարկով քաղաքում 2020 թվականի ապրիլի 9-10-ը տեղի է ունեցել «Дошкольное образование в современном образовательном пространстве: актуальные проблемы, опыт, инновации» խորագրով VI-րդ միջազգային գիտագործնական կոնֆերերանս՝ նվիրված Հ.Ս. Սկովորոդայի անվան Խարկովի ազգային մանկավարժական համալսարանի հիմնադրման 215-րդ ամյակին, որի կազմակերպմանը Ուկրաինայի կրթության և գիտության նախարարության և առաջատար ԲՈՒՀ-րի, Բելառուսի, Վրաստանի մանկավարժական համալսարանների հետ մեկտեղ մասնակցել է նաև Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ը, որը հանդես է եկել գիտաժողովի կազմակերպիչ ԲՈՒՀ-երից մեկը: Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի վարիչ՝ Վ.Ս. Կարապետյանն ընդգրկվել է կոնֆերանսի ծրագրային կոմիտեի կազմում:
- «Дошкольное образование в современном образовательном пространстве: актуальные проблемы, опыт, инновации» խորագրով VI-րդ միջազգային գիտագործնական կոնֆերերանսին հոդվածներով մասնակցել է նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի 7 դասախոս:
- Ուկրաինայի մայրաքաղաք Կիևում՝ 2021 թվականի դեկտեմբերին՝ online ձևաչափով կազմակերպվել է «Технологии формирования позитивной общественного мнения об образовательных инновациях» խորագրով համաուկրաինական գիտապրակտիկ կոնֆերանս, որին զեկույցով և հոդվածի տպագրությամբ հանդես են եկել նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի վարիչ Վ. Կարապետյանը և դոցենտ Ա. Դալլաքյանը / Методологические проблемы организации профессионального образования.- ТЕХНОЛОГІЇ ФОРМУВАННЯ ПОЗИТИВНОЇ ГРОМАДСЬКОЇ ДУМКИ ЩОДО ОСВІТНІХ ІННОВАЦІЙ: Матеріали Всеукраїнської науково-практичної конференції (30 квітня 2021 р., Інститут соціальної та політичної психології НАПН України, лабораторія психології спілкування) // ВІСНИК ПСИХОЛОГІЇ І ПЕДАГОГІКИ.–Випуск 26.–2021.- [Електронний ресурс]. – URL:: http://www.psyh.kiev.ua/Збірник_наук._праць._-_Випуск_26
- Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի վարիչ Վ. Կարապետյանը և դասախոսներ՝ Ալլա Դալլաքյանն ու Սվետլանա Մարությանը ընդգրկվել են «МЕТОДОЛОГІЯ СУЧАСНИХ НАУКОВИХ ДОСЛІДЖЕНЬ» խորագրով գիտագործնական կոնֆերանսի նյութերի տպագրման խմբագրական խորհրդում /Методологія сучасних наукових досліджень: збірник наукових праць за результатами XVI Міжнародної науково-практичної конференції, присвяченої 125-річчю заснування ХНПУ імені Г. С. Сковороди (14–15 листопада 2021 р., м. Харків) / за заг. ред. Ю. Д. Бойчука і К. А. Юр'євої — Харків : ХНПУ імені Г.С. Сковороди, 2021. — 232 с./
- Ամբիոնի դասախոս Ի Պոնոմարենկոն 2021 թվականի օգոստոսի 2-ից 10-ը մեկնել է Օդեսա, մասնակցել տեղի հայ համայնքում կրթամշակութային համագործակցության և փորձի փոխանակմանն ուղղված աշխատանքներին՝ ներկայացրել է մեր ԲՈՒՀ-ը և նախադպրոցական ոլորտի առկա վիճակը:

Ամբիոնի համագործակցությունը տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ հաշվետու տարում:

Ամբիոնը համագործակցում է.

- ֆակուլտետի մյուս ամբիոնների, մանկավարժության համահամալսարանական ամբիոնի հետ: Ամբիոնը պարբերաբար մասնակցում է կազմակերպված գիտաժողովներին:
- «Շախմատ գիտահետազոտական ինստիտուտի» հետ համագործակցության արդյունքում կազմակերպվել էր «Շախմատը նախադպրոցական հաստատություններում» ծրագրի վերապատրաստում և գործարկում: Աշխատանքները շարունակական բնույթի են:
- «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության հետ համագործակցություն «Նախադպրոցական ներառական կրթություն» հիմնահարցի շրջանակում:
- ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ համագործակցության շրջանակում ամբիոնի մասնագետները մասնակցում են պետական կրթական չափորոշիչների, միջին մասնագիտական կրթության չափորոշիչների և նախադպրոցական կրթական համալիր ծրագրերի վերանայման գործընթացներին:

Համագործակցություն արտասահմանյան բուհերի ամբիոնների հետ					
Բուհ/ամբիոն /երկիր	Համագործակցության ձևը				
	Ուսումնական	Մեթոդական	Գիտական	Հետազոտական	Այլ
Խարկովի ազգային պետական մանկավարժական համալսարան			ՀՊՄՀ-ն հանդես է գալիս որպես 6 կազմակերպիչների մեկը՝ Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի ներկայացմամբ		
Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի Նախադպրոցական կրթության, նախադպրոցական մանկավարժության մեթոդիկաների ամբիոններ	Ամբիոնը պարբերաբար քննարկումներ է ունենում տվյալ ամբիոնների մասնագիտական խմբի հետ, նորարարական ուսումնամեթոդական գործընթացներին ծանոթանալու նպատակով, ինչպես նաև փորձի փոխանակման շրջանակներում:				
Մ.Տանկի անվան Բելառուսի պետական մանկավարժական համալսարան		Психолого-педагогический практикум по дошкольной педагогике: Учебно-методическое пособие /– Ер.: 2021.– 160 стр.: /Վ.Կարապետյան, Ա.Դալլաքյան /			

Պրոֆ-դասախոսական անձնակազմի շարժունակություն

Ա. Ամբիոնի աշխատակիցների աշխատանք արտասահմանյան բուհերում				
Դասախոս Ա.Ա.Հ.	Պաշտոն	Երկիր/բուհ	Մնալու ժամկետ	Արդյունքներ
Բ. Ամբիոնի կողմից հրավիրված արտասահմանցի դասախոսներ				

Համագործակցային միջազգային ծրագրեր			
Անվանում	Գործընկեր	Ժամկետ	Ամբիոնի մասնակից դասախոսներ
Ծախմատը նախադպրոցական հաստատություններում	ՖԻԴԵ, Ծախմատ գիտահետազոտական ինստիտուտ	6-շաբաթյա, հունիսի 15-ից հուլիսի 26-ը	1.Վլադիմիր Կարապետյան 2.Սվետլանա Մարության 3.Ալլա Դալլաքյան 4.Արմենուհի Ղազարյան 5.Ավագյան Մարիաննա 6.Ամիրաղյան Մարիաննա 7.Հովսեփյան Սահակ 8.Ասմարյան Քնարիկ 9.Խուգեյան Արևիկ 10. Պոնոմարենկո Իրինա 11.Նալբանդյան Թամարա /ամբիոնի մասնագետ/

Մասնակցություն ՀՊՄՀ միջազգային ծրագրերին			
Անվանում	Գործընկեր	Ժամկետ	Ամբիոնի մասնակից դասախոսներ

5. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոն աշխատանքը հանրության շրջանում և հանրակրթական դպրոցների աշակերտների հետ, կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմները:
2020 թվականի 1-ին կիսամյակում համավարակի պայմաններում թե՛ դպրոցներում, թե՛ ԲՈՒՀ-ում ուսուցումն իրականացվել է հիբրիդային տարբերակով, այցեր 2020-2021 2-րդ կիսամյակում չեն իրականացվել, սակայն աշակերտների հետ հետադարձ կապը ամբիոնը փորձել է կազմակերպել առցանց հարթակում, տարածելով ֆակուլտետի և ամբիոնի մասնագիտությունների վերաբերյալ տեղեկատվություն: 2021-2022 1-ին կիսամյակի ընթացքում ֆակուլտետի փիառ պատասխանատուները կազմակերպել են այցեր:

Աշխատանք հանրակրթական դպրոցներում՝ աշակերտների հետ			
Աշխ-ի տեսակը	Համակարգող Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը	Ժամկետը
Ուսումնական	-		
Մեթոդական	-		
Դաստիարակչական	-		

Աշխատանք հանրության շրջանում			
Աշխ-ի տեսակը	Համակարգող Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը	Ժամկետը
Սկբզնական կրթության ֆակուլտետի գործունեության և Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության վերաբերյալ տեղեկատվության	Ա.Խուգեյան Ք.Ասմարյան	Փիառ խմբի աշխատանքների կազմակերպում ՀՀ տարբեր մարզերում	Տարվա ընթացքում տարբեր ամիսների

տարածում			
Առցանց տիրույթում ամբիոնի աշխատանքների վերաբերյալ տեղեկատվության տարածում	Թ.Նալբանդյան	Facebook սոցիալական ցանցում ամբիոնի էջի միջոցով մասնագիտական և աշխատանքային գործունեության վերաբերյալ տեղեկության փոխանցում	2020 թ.-ից սկսած /մշտական/

6. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Ներկայացնել որակի ապահովման ներքին համակարգի աշխատանքները և արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը:
Ամբիոնի դասախոսները պարբերաբար աշխատում են մասնագիտական որակի ապահովման ներքին համակարգի վրա, իրականացնում են փոխադարձ դասալսումներ՝ կատարում ամբիոնային քննարկումներ, ինչպես նաև դասընթացների բովանդակային որակը փորձում են պահպանել էլեկտրոնային հարթակում:
Ներկայացնել գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը և վերլուծել արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:
-

Ամբիոնի դասախոսների կատարած աշխատանքի որակի ապահովում և մշտադիտարկում		
Միջոցառման անվանումը	Պատասխանատու	Արդյունքահենություն
Դասալսումներ	Ամբիոնի վարիչ՝ Վլադիմիր Կարապետյան, ամբիոնի պրոֆեսոր՝ Ս.Մարության	Դասախոսների կատարած աշխատանքի մշտադիտարկում, ներկայացված պահանջների հաշվառում, ուսանողների հետ հետադարձ կապի պահպանում, ներառական կրթության մասին